Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
S-17

1862 p

891.99
Տ-17
12 MAR 2011
Printed in Turkey

ՏԱՃԱՐ ՄԱՀՍԱՑԻՑ

ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՈԳԵՄԻՏ ԵՐԳՈՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՎ ՏԵՂՈՒԹԵԱՄԲ Գ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ ՎԷՋԻՐԽԱՆ

1862

891.99
Տ-17
Printed in Turkey

13 .08.2019

1014
39

91.99
- 17

Printed in Turkey

ԸՆՍ

ՈԳԻՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ

Պանդխտի տարապրելոյ
Ի հայրենին իւր ի ծոցոյ ,
Ո՞չ ախորժ լիուեցին բանք
Կամ՝ զՀայրենեաց իւրոց գլուաղ ։

Ասյսպէս որոց ոգիք՝ յանուն
Հալին վայրաց քաղցր Հայրենեաց ,
Ո՞չ հեշտին՝ երգոցս հնչիւն
Ասղղիցեն յունկն Ասյնպիսեաց ։

Որք հին գարուց փառաց Հայոց
Յուշ մեզ ածեն զյիշատակ ,
Խրախոյս տուեալ ոչինչ անխոնջ
Յանդգին կանգնուցն այնց անսայթաք ։

ԸՍՈՒ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԵՂԻՆԱԿՍ

Որ զՀայրենեաց երդէք զսէր
Յաւիւն, յաշխոյժ ջերմջեր,
Ո՞չ զուարթ ակնարկեցէք,
Ի սոյն՝ որ զՁերդ Ձեզ ձօնէ զերկ։

Յորչափ Տողերս ի սիրտ Հայկեանց
Կան իբր 'կոթող յաւէրժակաց,
Անմահ կացցեն Մնուանք Գրչացդ
Ի շնորհս մեծի մերս Հայրենեաց։

Յո՛րչափ երգոցդ գեղգեղ գալ
Հայորեբոյ յերկիրս մերս,
Անմահաձիք յաղաւն Մասիս
Ի ցանկալին իմ՝ Հայրենիս։

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Մինչ կու յուսամ խոյրսայ ընտ թիւն
Յետ դառնալոնչ ձմերանոյն
Եւ ի գաւառն իմ Հոյրենի
Գեղաձիծաղ դառնայ դարուն ։
Մինչ ըղջի ի բոյր փիթիթն ծաղկունք
Եւ ճառագեն նորեկ ծիծառունք
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան ։
Ոչ Հելլեսեռեան ինձ դաշտավայր ։
Եւ կամ դուարթ մարգագետին
Ոչ քան զքեզ չքնաղագեղ
Խառնակեան պայծառ երկին ։
Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Քոյովդ յար տագիմ անձկով
Ի խանձարուրդ խնոյ կենաց
Ով Հայաստան առնեմ քեզ դարձ ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տխոցս իմ գեղ դալար
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ ի գարշապար ։
Ուր հէք մուտայս մնան ի յերեր
Առանայցէ երգել զսէր
Զնին ի ծոցդ առնեմ յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան ։

Մ · ՊԷՇԻՄԹԱՇԼԵԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան գաղջը իմ՝ Հայաստան
Ոգիս յանուանդ հալեցան .
Մինչև ցե՞րբ ես պանդուխտ ,
Արախս իմ՝ երբ լցցի ուխտ :
Աչքս արդեօք անձկալից
Երբեմն գրեզ տեսցե՞ն
Աչքս այս արտասուալից
Գաղ արեսցի՞ն արդեօք :
Տուրվմ՝ն իմ՝ ի հոգ կենատուր
Ցացէ՞ զհամբոյրն ուխտաւոր ,
Արդեօք գլուխս այս վշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ ի ծոց :
Հայաստան սէր իմ՝ Հայաստան
Ոգիս ի տենչ հալեցան
Մինչև ցե՞րբ ես ի քէն պանդուխտ
Արախս իմ՝ ե՞րբ լցցի ուխտ ։

Խ • Վ • ԳԱՅԻԱՆՑԵՆ

Ա. Ո. ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր գրախտավայր ,
Դու մարդկայնոյ ցեղիս ծիրան
Դու եւ բնիկ իմ հայրենիք ,
Հայաստան , Հայաստան , Հայաստան ։
Ի վերջ անուանդ սիրտս իմ , ո՛հ , յոյժ
Ողեւորի ի նոր խրախոյս .
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ ,
Ի քեզ՝ ի քեզ յոյս իմ միայն ։
Հայաստան . . . . . ։
Հայաստան անուն փարելի ,
Ի քեզ հանդիստ Նոյեան տապան
Եղիս եւ քեզ ապրեցաւ Նոյ .
Հայաստան . . . . . ։
Դեռք քաջաւալք ազգենաբուղխ .
Զհոգդ բարի առնեն յուսթի .
Քեզ ապրիմ ես , քեզ միշտ ընծամ ,
Քեզ , քեզ պանծամ փառք իմ միայն .
Հայաստան . . . . . ։
Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան
Քո զնփիւռին քաղցր է շնչիւն ,
Հայաստան . . . . . ։
Հայկ , Արմենակ , Արամ , Տիգրան ,
Տրդատ , Սմբատ , Վարդան , Վահան .
Զոր շնչեցին եւ զօրացան ,
Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ
Զքեզ , զքեզ , սէր իմ միայն .
Հայաստան . . . . . ։

ԳԱՇՆԱԿ

ՅԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՄԱՆ ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ

ՈՐ Ի ԹԱՍԳԻԻԳ.

Օ՛ն մեր նախնի դարուց կարդամք հրաւէր ,
Նախնի դամենաց՝ սուրբ ձեռաց հիւս պսակօք .
Մեր հայրենի փառաց մանկունքն անվեհեր
Գան յերեւան գեղեցկահիւս գիսակօք ։

Գունդ ի գունդ
Սիրաք ի թունդ ։

Ժամանակաց՝ անցից՝ վասն կրթարան
Եւ նոր դիպաց՝ նոր դգայմանց կարդադիր
Ահա մեզ նոր՝ արդ կիանգնի տեսարան
Թէ՛ կրթութեան՝ թէ՛ հաճոյից արդադիր ։

Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից
Հայաստանի սուրբ դաշտերուն ,
Եւ կցրուի սրտից թախիծ
Սրբ հայրենեաց յիշեմք զանուն ։

Ո՛վ սուրբ Հայաստան
Փառաց օթեւան
Որք զաւկներդ հոս
Քեզ պիտի ոգան ։

Հոս երազ՝ անմահ
Քո նախնի փառաց
Մեզ պիտի վառէ
Ի սէր հայրենեաց ։

Մայրիկ Հայաստան
Փառաց գերեզման
Որք որդիքդ այրիդ
Հոս պիտի ոգան ։

Մէկ մայր մ՚ունինք մեր Հայաստան եւ հոգին
Եղբայրութեան սրտերնուս մէջ կառնոյ ։
Օ՛ն չարաղէպ մեր բաղդն ու սէր կաթոգին
Հոս միութեան ուժոյն ընեենք ենթակայ ։
Եւ ձեռք ։ ջանք
Միմեանց տանք ։
Ընդհանրական սէրն եւ հոգին հայութեան
Մեզ մուսայից օթեւանիս նուիրի
Հնչեն Հայ փառք՝ անուն նոր՝ սուրբ յաւիտեան
Նորէն Սիսակ ։ Գեղամ ի կեանս հրաւիրի ։
Կվերածնին հոս ոսկի դարք
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ ։
Կշտակուին հոս անկիրթ բարք ։
Հոս եւ ծիծաղ կրնայ դառնալ ։
Ով սուրբ Հայաստան
Քաջաց օթեւան
Հոսկէ որդիքդ հան
Գիրկդ պիտի դան ։
Հոս ոճ Հայ լեզուին
Նոր զարդ՝ ձեւ կառնու
Կեանք անմեղ ։՝ երկինք
Կազդեն սրտերու
Քաղցրի՛կ Հայաստան
Մեր հարց օթեւան ։
Ծոցդ որդիքդ որ դան
Էր պիտի ողբան ։

Դ. Գ. Հ.

ԱՐԱՔԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ.

Մայր —Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Անեայց մէջը պտրտում եմ։

Բայց նոքա միշտ յեղ յեղուկ
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խլեալով
Փախչում էին լալագին։

Արա՛քս՝ ինչո՞ւ ձկանց հետ
Խաղ չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չհասած՝
Սգաւոր ես ինձ նման։

Ի՞նչու արցունք ցայտում են
Քու սէգ հպարտ աչերից
Ի՞նչու արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պղտորիլ յաւտակդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կհասնիս դէպ ի ծով։

Վարդի թփեր թող բուսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն միչեւ առաւօտ։

Աշտարակներ ու դիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին
Ձիւն ասան ու տերեւ
Թող թաց անեն տուր օրին։

Ափերիդ մտա երդ եղաւ
Հովիւք թող գան հանարձակ
Գառն ու ուլը քու վճիռ
Ջուրը մտնեն միշտ արձակ։

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով՝
Լսակէս խօսեց յառակից։

«Խիզախ, անմի՛տ պատանի,
Ներէս ի՞նչու գարեւոր
Վրդովեցի՞ ես, նորոգուի՞
Իմ ցաւերը բիւրաւոր։

Սերելիի մահից հետ
Երբ ես տեսել, որ այրին
Ոտից գլուխ պճնուի
Իր զարդերով թանկագին։

Որի՞ համար զարդարուիմ՝
Որի՞ աչքը հրապուրեմ՝
Ետեւէն՝ ինձ են տեսել,
Ետեւէին՝ ես օտար եմ։

Կար ժամանակ որ ես էլ
Ներքոզարդիդ հարսի պէս
Հագար ու բիւր պչրանքով

Փախչում էի տիեզերէս։

Յաւտակս պարզ ու վճիտ,
Կոհակներս ոլորուն,
Լուսաբերը մինչեւ այդ
Չլիս մինչեն էր լողում։

Ինչս մնաց այն օրից
Որ չլսոմա գեղերս,
Ոլը իմ շէն քաղաքից,
Որ բերկրալի տեղերս։

Տուրքը չլի ամեն օր
Ի տուրք ծոցէն Ադարատ,
Մայրախնամ ինձ անունդ
Պարգեւում է լիառատ։

Բայց ես այն տուրք չբերով,
Տուրք Յակոբի տղբիւրին
Վիտի ցօղեմ արտորա՛յք
Իմ առելի օտարին։

Դամ կենտառու իմ չրով,
Ափերիս մտ կկղած
Իր աղօթքը կատարէ
. . . . . .

Մինչ իմ որդիք (ո՛վ գիտէ)
Ցարաւ, նօթի, անտէրունչ,
Օտար յաշխարհ յաժում են
Թոյլ ոտքերով կկտաշունչ։ . . . .

Հեռու հեռու քշեցին
Բնիկ ազգը իմ Հայկեան,

Նորա տեղը ինձ տուին
. . . . . ։

Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ տիերը ,
Եւ կամ՝ դոցա հրապուրեմ
Ճպռտա պլշած աչերը ։

Քանի՛ որ իմ՝ զաւակունք
Լսպէս կու մնան պանդուխտ՝
Ցխս միշտ ազգ՝ որ կտեսնէք ,
Այս է անխաբ իմ՝ սուրբ ուխտ ։ . . . »

Էլ չխօսեց Աբաքար ,
Յորձանք տուեց ահագին ,
Օղակ օղակ օձի պէս
Աւազ տղաց մոլեգին ։ —

ՅԵՐԳԱՐԵՆ ՏՊԵԱԼ Ի ՄՈՍԿՈՒԱ

ԱՕԳՈՒՅԻՆ ՍՐԱՏԱՆԱՊՐՈՒԹԻՒՆԸ

ԴՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԿԱՆԱԾ ՕՐԸ

25 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
Ի՞նչ կյաստպէք ելնել ի հանդէս .
Ի՞նչ կյաստպէք . — սիրտ կդիմանա՞յ ,
Սիրտ որ Ազգասէր ըլլալ կցանկայ ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ ։
Խեռ ատելութեան եւ չար նախանձու
Սերմերն ու ոգին հեռա՛ւ մղենք հեռու .

Սիրտ սրտի կապուած , թեւ թեւի տուած ,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած .
Օ՜ն վազենք , յառաջ ի տուր խաչն վառած ,
Օ՜ն երթանք , յառաջ , եւ անձնանուէր՝
Հայրենեաց օգտին ելլանք ուխտանուէր .
Հա՛յ մի վիճաւոր , սիրտ ա՛ռ եւ սիրտ տուր ,
Տիարք զօրանան , քաջք խրախուսին ,
Վատերը բացուին , վատերը զատուին ,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին ,
Խաչ , սէրն են նշան ճշմարիտ Հայուն
Խաչ , սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն .

Սիրոյ դրոշներ
Թող արդ պարզուին ,
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին .
Հայն մէկ սիրտ եղաւ
Սիրով միացաւ
Սուտ են որ ըսեն
« Հայք զիրար կատեն » ,

Սուրբ Աստուածն մայր աթոռոյն դիրքը ,
Եկէ՛ք , հայկազունք եկէ՛ք միանանք .
Եւ սիրենք մեր վշտացած մեր սիրտը ,
Օրհնելով Տէրը , որ մեզ պարգեւեց
Մեր Ազգին կարգն ու հոգին ,
Ակզայն Սահմանադրութիւն
— . Յաւերժացի արդիւնաւէ՛տ ,

ՍՏԵՓԱՆ Պ . Պ . ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՌ ՏԱՐԵԳԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹԵԱՆ

Ամի՛ր Հայկազունք , յառաջ ընթանանք ,
Սահմանապրութեան նոր բարեւ մ՚ալ տանք ,
Որ Ազգն երբ զԱնի փրկարար կոչեց ,
Նո՛ր հոգի , նո՛ր կեանք Անոր պարգեւեց ։
Եկէ՛ք բարեկա՛մք , առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած ։
Կեցցէ , կեցցէ , կեցցէ միշտ ,
Ազգն ու Սահմանապրութիւն ։
Զրկանք , բռնութիւն վատթար վարչութեան
Բերին մահն ի գուռն Հայոց ազգութեան .
Սահմանապրութիւնն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջին հարթեց ։
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ
Որ ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանապրութիւն ։
Ջնջեց ամենայն կարծիք անձնական
Խեղդեց ամենայն անհատական ձայն ,
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին
Սուաջնորդ լինել գործոց ազգային ։
Այն որ Աստուծու ձայն առաւ մեզի ,
Ինչ իմ ոչ առնու ձայնով մ՚այնպիսի
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանապրութիւն ։
Հայերս անարդուած փրկեց բարձրացուց
Արդկային կոչման մեզ արժանացուց ,
Շնորհեց մեզի , զոր ազատ ատուած

Մարդկային երկրորդ նշանն է գրած ։
Որուն շնորհին յարդ ստացանք մենք ։
Անոր յարդ տալով աչքինք ու երդենք ։
Կեցցէ ։ Կեցցէ ։ Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն ։
Դու ալ Հայաստան , սիրուն Հայրենիք ։
Ալ այսուհետեւ մի ազատ լռիկ ։
Չի՛ ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ
Չքեզ հարս կուգեն տեսնել զարդարեալ ։
Ա՛լ մի՛ լար մայրիկ լացդ ի պար փոխէ
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ ։
Կեցցէ ։ Կեցցէ ։ Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն ։
Հայե՛ր ։ միանանք մեր մօրն հետ օրհնենք
Չանոնք ։ որ մեզի տուին տուրք օրէնք ։
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ ի կեանք փառունակ ։
Թո՛ղ եւ մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան
Կեցցէ ։ Կեցցէ ։ Կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն ։

Ց · Գ · ՍՐՎԱՆԾԵԱՆ

ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ինչէ՞ք զուարթունք՝ եւ ի Ձեր թեւս ապաստան
Յոյց ելցուք այսօր յանձկալին Հայաստան ։

Ըզծագկապսակդ ածէք այսր զքնար՝
Որ երգէր երբեմն ի գրախառս Աղենոյ ։
Հանդուցեալ այժմիկ ի շիրմաց անար՝
Զայն ոսկ զարմացեք զորդիս Արամայ ։

Աստ զիւ ցաղուն
Թողեալ զդամբան ։
Եւ անուն զուարթուն
Երգեսցեն միաբան
Ողջոյն Քեզ ողջոյն
Սահմանադրութիւն ։

Ով որ յեցեալ ի սխուր սափոր զիւ ցաղանց
Գթով յերկինս ածես նամէա բիւրս ոչաց ։
Ով Հայաստանեայց ազգ սրբանուէր՝
Ահա հաշտ ակամբ ժպտի քեզ Աստուած
Պարզի երդնելանց լար կապոյտ յիմիներ
Դառնայ Աղաւնեակն ոսոսոլ ճիթենեաց

Սիրասա առ Տիգրիս
Որմեայն առ Սեւան
Տալով աւետիս
Հնչեսցեն միաբան ։
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն ։

Ամ ի յամ՝ սիրտ ի սիրտ՝ ազի խառն յազի
Մատիք օն անդր յասպարէզ՝ սիրտք հայեցի .
Զի՛ չքնաղ ոսկիպարզի արդ յաչս իմ . . .
Ահա յոյս եւ սէր՝ որպէս զոյդ հրեշտակք
Աղաչնորդեն մեզ . . . ով Տէր . . խաբեցի՞մ . .
Ոչ ։ զայդ վկայեն սիրոյ այդ բաժակք . . .

Հայկեանք առ Հայկեանս
Գալիք զարուց՝ ոչ զան
Տալով արձագանս
Կրկնեսցեն միաբան
Ողջո՛յն քեզ ողջո՛յն
Սահմանապրուխիւն ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԵՐԳ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Ն. Վ. ԱՐԺԱՐԱՆԻ ԲԵՐԱՑ

Ո՛՝ որ ըզբոյս բարձեալ կերես յԱՀդ ՝ և՛ զաղջ ,
Աստուա՛ծ ՝ ակն ա՛րկ սանուց յարկիս ի յաւաչ .
Զոր ընդ աւօտս ՝ ընդ օդասիլ բոյսս ազու
Առ ոտս Վեհիդ ուղղեմք յոգի արդ հլու ։
Ո՛՝ որ ըզցայդս եռուր հանել մեզ ի դլուխ
Ազատ զոգիս կալեալ յայսոց չարաբուխ .
Աստուա՛ծ հզօր ՝ դու և ըզխուս տուր գլխել
Մեզ ՝ որ և սերկ եհաս յայս յարկ մեզ խմբել
Ըզխուս Աստուա՛ծ ՝ զոր սկսաք յանուն Քոյ
Սրա՛ բեղուն ի սուրբ վաստակս և արդոյ .
Զեզ՝ զմիտս մեր շնորհացդ ի յուխ , և զոգիս
Առնել օրհնեալ քրտանց արժան արդասիս ։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ Ս. ԱԼԻՇԱՆԵԱՆ

ՀԱՄԱ-ՍՕՐԱ
Ա. Մելիքյան

ԾԱՆՈՒՑՈՒՍ

Կը ծախուի Գ. Ընկերութեան Գրատունը, որ է Հիմակու Հիմա Կիլիկիոց Գործակալութեան սենեակը Գալճըլար խան թիւ 4։

Դ. 1

Գին Դէպ օրինակէ 1 ղուրուշ։

Կը գտնուի նաեւ ամեն Հայ Գրավաճառներու քով։

5